

Սիրելի անդամներ,

Միական Խորհուրդի հրաւերով եւ Առաջնորդ Հօր կարգադրութեամբ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ Հովուական պաշտօնիս ձեռնարկեցի Օգոս. 17-էն սկսեալ:

Ամէն Կիրակի Ս. Պատարագ մատուցած ենք եւ ժամերգութիւն կատարած: Քարոզ տուած ենք երկլեզու, թէ Անգլերէնով եւ թէ ալ Հայերէնով:

Երկու Կիրակի Ս. Պատարագ չենք մատուցած բացակայութեան պատճառաւ. Սեպտ. 4ին Երիտասարդաց կազմակերպութեան համագումարին առթիւ եւ Հոկտ. 30ին, ընտանիքիս փոխադրութեան առթիւ:

Կատարած եմ հետեւեալ Խորհրդակատարութիւնները.

Մկրտութիւն 3, Պսակադրութիւն 1, Թաղում 2:

Այցելած եմ ծխականներու զանազան առիթներով. Հիւանդներուն տունը 4, հիւանդանոց 11, Ցաւակցական 4, հովուական 113:

Ներկայ գտնուած եւ նախագահած եմ Միական Խորհուրդի եւ եկեղեցւոյ յարակից կազմակերպութեանց ժողովներուն:

Նաեւ մասնակցած ալ ժողովներու եւ համագումարներու:

էյ.Սի.Վայ.Օի համագումարին, Սեպտ. 2-4, ի Բրովիտէնս:

Կիրակնօրեայ դպրոցներու շրջանային ժողովին նոյմ. 12ին էվրնսթըն:

Հոգեւորականաց շրջանային ժողովին, նոյմ. 14ին, Բէյսիին:

Առաջնորդարանի Օժանդակ Տիկնաց ժողովին, նոյմ. 16ին, էվրնսթըն:

Միշտ ներկայ գտնուած ենք եկեղեցւոյս եւ յարակից կազմակերպութեանց ձեռնարկներուն եւ պէտք եղած պարագային մեր օժանդակութիւնը բերած եւ առաջնորդութիւն տուած ենք անոնց:

Եկեղեցւոյս ձեռնարկներէն զատ քաջալերած ենք նաեւ ալ ազգային եւ մշակութային ձեռնարկներ, ինչպէս.

Ռ.Ա.Կ. Տարեդարձի տօնակատարութիւնը, Հոկտ. 23, էվրնսթըն:

Հայաստանի Տարեդարձի ,, ,, ,, նոյմ. 27, Միքակօ

Աստուածաշունչի տպագրութեան 300րդ տարեդարձը, Դեկտ. 11, էվրնսթըն:

Եկեղեցւոյս մէջ ընդունած ենք այցելութիւնը հետեւեալ եկեղեցականներուն:

Գեր. Տ. Թորգոմ Ս. Եպկ. Մանուկեան - Առաջնորդ Սրբազան Հայրը:

Հոգ. Վարուժան Վրդ. - Մ. - Գապարաճեան - էվրնսթընէն:

Հոգ. Վահրիճ Աբեղայ Գազանճեան - Իսթ Սէնթ Լուիզէն:

Հոգ. Վրթանէս Աբեղայ Գալայճեան - Վոքիկընէն:

Արժ. Տ. Տաճատ Քհնյ. Դաւիթեան - Ռէյսիինէն:

Արժ. Տ. Գրիգոր Քհնյ. եւ Երեցկին Հայրապետեան - Սաուլ Միլվոքիինէն:

Բէվըրէնտ Չարլս էմ. Բօնտ-Սէնթ Թիմոթի էքիսթրըլ եկեղեցիէն, Միքակօ:

Եկեղեցւոյս ամսօրեայ թերթիկը, "Լուսաւորիչ", ամէն ամիս կանոնաւորաբար կը հրատարակուի երկլեզու, հայերէն եւ անգլերէն բաժիններով եւ նկարազարդ. խոշոր ծաւալով եւ 265 օրինակ:

Այսքան մեր երեք ամիսներու գործունէութեան մասին. վստահ ենք որ շատ ընելիքներ ունինք այս եկեղեցիէն եւ համայնքէն ներս:

Մեր ծրագիրներուն իրագործման համար պէտք ունինք մեր հաւատացեալ ժողովուրդին բոլորանուէր աջակցութեան:

Այս առթիւ կուզեմ շնորհակալութիւն յայտնել Միական Խորհուրդին եւ բոլոր եկեղեցապատկան կազմակերպութեանց ուրոնք ի սրտէ աշխատեցան եկեղեցւոյ բարեւաւման եւ զօրացման համար:

Աստուած օրհնէ բոլորին եւ մեր ջանքերը արդիւնաւոր ընէ ի փառս Ս. Երրորդութեան եւ ի պայծառութիւն մեր եկեղեցւոյ: Ամէն:

Սարգիս Քհնյ. Գաշըզճեան
Ցուն. 2, 1967 Միքակօ